ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2013 թվականի N 302 - Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի>> **որոշում եմ՝**

1. 2013 թվականի օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ <<Ջրհեղեղի ժամանակ փրկարարական աշխատանքների իրականացում>> թեմայով:
2. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Գ.Գրիգորյանին:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Գ.Գրիգորյանին՝

1) Շտաբը կազմավորել մարզային փրկարարական վարչության բազայի վրա, անհրաժեշտության դեպքում միջնորդել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ մարզպետարանի աշխատակազմի համապատասխան վարչությունների և բաժինների մասնագետներով համալրելու համար:
2) Մշակել և մինչև ս/թ հուլիսի 17-ը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

4. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությանը,
2) քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունները,
3) մարզային տարահանման հանձնաժողովը,
4) Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովը,
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Մեղրաձոր, Մարմարիկ համայնքների ղեկավարներին:

5. Ուսումնավարժության ղեկավարումը իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի նստավայրից:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ